ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

«ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ՝ Ս.ԴՎՈՅԱՆ-ԻՆ

«27» նոյեմբեր 2025թ.

Ծ Ա Ն Ու Ց Ում 795-Ա
Ո ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/64-5

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Դվոյան՝ «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի և Արթիկի համայնքապետարանի միջև կնքվել է «29» սեպտեմբեր 2025թ-ի «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/64» ծածկագրով պայմանագիր որից հետո կնքվել է թիվ 1 համաձայնագիր, որի շրջանակում պետք է մատակարարվեր 27-րդ չափաբաժնով նախատեսած A4 ֆորմատի թուղթ: ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ A4 ֆորմատ թղթի ձեռք բերման և մատակարարման: Տեղեկացնում ենք, որ պայմանագրի հավելված թիվ 2-ի 27-րդ չափաբաժնի A4 ֆորմատի թղթի առաջին մատակարարման ժամկետը սահմանվել է 20 օրացուցային օր, սակայն պայմանագրով նշված ժամկետում Ձեր կազմակերպությունը «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն չի մատակարարել A4 ֆորմատի թուղթ խախտելով մատակարարման ժամկետները: Սույն թվականի հոկտեմբերի 10-ին պատասխանատու ստորաբաժանումը պահանջագիր է ուղարկում «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊ ընկերության էլ.փոստին ապրանքի մատակարարման տալով ողջամիտ ժամկետներ սակայն կազմակերպության կողմից ոչ մի արձագանք: «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊ կազմակերպությանը Արթիկ համայնքապետարանից նորից գրություն է ուղարկվում «31».10.2025թ-ին առաջարկելով 10 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել A4 ֆորմատի թուղթ ըստ պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված չմատակարարելու դեպքում Ձեզ կազմակերպության հետ կնքված պայմանագիրը միակողմանի կլուծարվի: Հայտնում ենք Ձեզ՝ որ ընկերության կողմից չեն պահպանվում պայմանագրի տեխնիկական պայմաններով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետները: Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,

Եթե՝

(ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

(բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, խախտել է պայմանագրի ժամկետը (մատակարարման ժամանակացույցը).

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագրի 27-րդ չափաբաժինը, պայմանագիրը համարելով այն լուծված ընդհանուր 1 380 000 (մեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: Ընդ որում, գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարները:

Այսպիսով «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին տրվում է 10 օրացուցային օր տուժանքի մասին համաձայնագրով (Հավելված 3.2) սահմանված որակավորման ապահովման 299 250 (երկու հարյուր իննսունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամը և (Հավելված 4.1) սահմանված պայմանագրի ապահովման 199 500 (մեկ հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարները ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի բյուջեի 900202151024 հաշվին փոխանցելու նպատակով և ծանուցել վճարման անդորագրերի պատճենները կամ դրանք տրամադրել **artikgnumner@mail.ru** էլեկտրոնային փոստի հասցեով, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումների համաձայնագրերը և վճարման պահանջագրերը մեր կողմից կներկայացվեն Ձեր կազմակերպության սպասարկող բանկ «Ակբա բանկ» ԲԲԸ:

Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված ՍՊ ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե վերը նշված վճարման ենթակա գումարները փոխանցվեն ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի բյուջեի 900202151024 հաշվին, ապա «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի նկատմամբ չի կիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում սույն որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան

հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՈՍԿԱՆՅԱՆ**

Կատարող՝ ֆինանսատնտեսագիտական,
եկամուտների հաշվառման և
հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ
Ղևոնդ Գրիգորյան